Հաստատված է
Առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2021 թվականի նոյեմբերի 22-ի N 11-Լ - որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2021թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ..... 3

Ներածություն 4

ԱԱՏՄ-ի նպատակ..... 4

ԱԱՏՄ-ի խնդիրներ..... 4

Կառուցվածք..... 5

Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ..... 5

Տարածքային ստորաբաժանումներ՝ տարածքային կենտրոններ..... 6

Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետեր (ՍԲՀԿ)..... 6

Քարտեզ 1

ԱԱՏՄ-ի ՏԿ տեղաբաշխվածությունը ՀՀ տարածքում..... 7

Քարտեզ 2

ԱԱՏՄ-ի ՍԲՀԿ-ների տեղաբաշխվածությունը ՀՀ տարածքում..... 8

ԱԱՏՄ ձեռքբերումների համեմատական ցուցանիշներ..... 9

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ..... 12

1. ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը..... 12

2. ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկեր..... 23

2.1 Կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման անհրաժեշտություն..... 23

2.2. Ռիսկի նվազեցմանն ուղղված գործողություններ..... 25

2.3. Ստուգումների գործընթացը..... 25

2.4. Ստուգումների իրականացման ժամանակ կանխատեսվող խնդիրներ..... 26

2.5 Վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրներ 26

3.ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ 29

Հավելված 1

Միջոցառումներ՝ ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված..... 30

Օրենսդրական ակտեր..... 45

Հավելված 2

Միջոցառումներ՝ ԱԱՏՄ-ի կանխարգելիչ և իրազեկման 2021 թվականի..... 48

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

www.hlib.am

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

Գրասենյակ - Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Խորհուրդ- Տեսչական մարմնի կառավարման խորհուրդ

ԱԱՏՄ - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին

ԴՇՎՎ - Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն

ԲՕՍՎՎ - Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն

ՀՍՀՎՎ - Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն

ՌԳՍՊՎՎ - Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն

ԻԱՓՎ - Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն

ԻԽՀՏԱԲ - Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

ԱՕՎՎ - Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն

ՏԿ - Տարածքային կենտրոն

ՍԲՀԿ- Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ Օրենքի, ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշման համաձայն, յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ին նախորդող նիստին Խորհուրդը քննարկում և հաստատում է Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը, որը հրապարակվում է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում:

Տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումներից, ստուգումների տարեկան ծրագրով պլանավորված ստուգումներից բացի, ԱԱՏՄ-ն իրականացնում է մի շարք չպլանավորված աշխատանքներ, մասնավորապես՝ ստուգայցեր, հակահամաճարակային վերահսկողական, ինչպես նաև ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1071-Ա որոշմամբ սահմանված իր լիազորությունների շրջանակներում իրականացվող այլ վարույթներ, միջոցառումներ:

ԱԱՏՄ-ի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

ԱԱՏՄ-ի խնդիրներն են՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

Կառուցվածք: ԱԱՏՄ-ը կազմված է հիմնական մասնագիտական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից, սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերից: Տարածքային ստորաբաժանումները տեղաբաշխված են Երևանում և ՀՀ որոշ մարզերում: ԱԱՏՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ

1) Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն,
2) Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն,
3) Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն,
4) Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն.
- Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժին,
- Աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության բաժին,

5) Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն,

6) Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն.

– Իրավական աջակցության բաժին,

– Փաստաթղթաշրջանառության բաժին,

7) Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին,

8) Որակի ապահովման վարչություն,

9) Զորահավաքային բաժին:

Տարածքային ստորաբաժանումներ

Տարածքային կենտրոններ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

1) Երևան քաղաքի տարածքային կենտրոն,
2) Հյուսիսային տարածքային կենտրոն,
3) Արևմտյան տարածքային կենտրոն,
4) Արևելյան տարածքային կենտրոն,
5) Հարավային տարածքային կենտրոն:

Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետեր (ՍԲՀԿ)

1) «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
2) Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
3) Բավրայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
4) «Շիրակ» օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
5) Բագրատաշենի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
6) Այրում-Ջիլիզայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
7) Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ:

ԱԱՏՄ-ի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 20-ի 152-Ա հրամանով հաստատվել է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունը, և սահմանվել է տարածքային կենտրոնների տեղաբաշխվածությունն՝ ըստ մարզերի:

ԱԱՏՄ-ի տարածքային կենտրոնների և ՍԲՀԿ-ների տեղաբաշխվածությունը՝ ըստ ստորև ներկայացված քարտեզների.

Քարտեզ 1.

ԱԱՏՄ-ի տարածքային կենտրոնները Հայաստանի Հանրապետության տարածքում



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am



Քարտեզ 2.

ԱԱՏՄ-ի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի տեղաբաշխվածությունը Հայաստանի Հանրապետության տարածքում

«Բավրա» ՍԲՀԿ

«Գոգավան-Պրիվոլնոյեի» ՍԲՀԿ

«Բագրատաշեն» ՍԲՀԿ

Հ. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեմ գիծ 8107
Գործունեության տարեկան ծրագիր 2022թ.

ԱԱՏՄ-Ի ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ՝ համառոտ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

ԱԱՏՄ-ի 2021 թվականի առավել առարկայական ձեռքբերումների շարքում հարկ է առանձնացնել մի շարք կարևոր ձեռքբերումներ.

- 2021 թվականին ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ կատարվել են լրացումներ, և հաստատվել է ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության ենթակա 2 ոլորտի ևս 3 ստուգաթերթ:
- ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության (ստուգում, վարչական վարույթ) ընթացքում առավել օպերատիվ և անկախ փորձագիտական եզրակացություններ ունենալու նպատակով, ինչպես 2020 թվականի, այնպես էլ 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում և գնումների պլանում հատկացվել են ֆինանսական միջոցներ լաբորատորիական ծառայություններ ձեռք բերելու նպատակով, մասնավորապես՝ ջրի, աղմուկի, թրթռման փորձաքննություններ պատվիրակելու համար:
- ԱԱՏՄ-ն 2021թ-ին ստանձնած ԱՊՀ անդամ երկրների աշխատանքի տեսչական մարմինների նախագահությունը լիիրավ կատարեց, որի արդյուքնում քայլեր են ձեռնարկվում 2023 թվականից ստանձնելու **«Աշխատանքի միջազգային տեսչությունների կազմակերպության»** լիիրավ անդամի պարտականությունները ստանձնելու ուղղությամբ՝ քվեարկության ձայնի իրավունքով:
- ԱԱՏՄ-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի (այսուհետ՝ ՄԱԶԾ) միջև 2021 թվականին հունիսի 10-ին ստորագրվել է հուշագիր, համաձայն որի ՀՀ Կառավարության N 1459-Ա որոշմամբ ԱԱՏՄ-ի կենտրոնական ապարատին և Երևանի տարածքային կենտրոնին ամրակցված տարածքի համար նախագծանախահաշվային աշխատանքներն իրենց կողմից կատարվելու են բարեգործական հիմունքներով, ինչպես նաև ֆինանսավորելու են էներգախնայող աշխատանքների իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների 20%-ի չափով: Նշված աշխատանքներն արդեն մոտենում են ավարտին և 2021թ-ի դեկտեմբերին ՄԱԶԾ-ն ԱԱՏՄ –ին կհանձնի վարչական շենքի վերանորոգման ավարտուն նախագիծը:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

➢ Աշխատանքային իրավունքի բնագավառում ԱԱՏՄ-ի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, դիմում բողոքներին արձագանքելու, կապը հանրության հետ ավելի արագ կազմակերպելու նպատակով 2021 թվականին գործարկվել է աշխատողներից անանուն բողոքների ստացման www.employeeprotect.am համակարգը: Նշվածի շրջանակներում ակնկալվում է աշխատողի աշխատանքային իրավունքի պաշտպանության նոր մեխանիզմի վերաբերյալ իրազեկում, որը հնարավորություն կընձեռի բացահայտել ներքին խնդիրները, դժգոհությունները և առաջարկները, որոնք աշխատանքային պրակտիկայում կարող են խոչընդոտ հանդիսանալ: Փորձնական գործարկվել է կայքը և աշխատանքային իրավունքի խախտումների հետ կապված ստացվել են դիմում-բողոքներ: Կայքը լիարժեք գործարկվել է հոկտեմբերի 1-ից: Նախապատրաստվել է վիճակագրական վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

➢ Վերսկսվել է Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր համակարգի ներդրման գործընթացը, վերջինիս շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է մասնագետների վերապատրաստումը:

➢ ԱԱՏՄ-ի մասնակցությամբ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և ՀՀ ԱՆ հետ համատեղ ԱՀԿ գործիքակազմով գնահատվել են ՍԲՀԿ-ների կարողությունները, արդյունքում՝ ներկայացված առաջարկությունների հիման վրա սահմանի անցման կետերը ձեռնարկել են համապատասխան միջոցառումներ՝ Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոններին և ԱՀԿ պահանջներին (մոտեցումներին) համապատասխանեցնելու ուղղությամբ:

➢ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից (ILO) « Միասին աջակցենք Հայաստանում իրավունքի պաշտպանությանը» ծրագրի շրջանակներում իրականացվել է ԱԱՏՄ-ի աշխատակիցների վերապատրաստման կարիքների գնահատում:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

➢ ԱԱՏՄ-ը և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ստորագրել են համագործակցության հուշագիր: Հուշագրի շրջանակներում նախատեսվում է բարձրացնել պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ենթադրյալ դեպքերի հայտնաբերման և գնահատման կապակցությամբ ԱԱՏՄ-ի ծառայողների մասնագիտական կարողությունները և շարունակաբար կատարելագործել դրանք, աջակցել պարտադիր կամ հարկադիր աշխատանքի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործմանը և կիրառելիության ապահովմանը, ինչպես նաև այս կապակցությամբ ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրմանն ու հզորացմանը:

➢ Շարունակաբար համալրվում է անձնակազմը, 2019թ-ի նույն ժամանակահատվածի հետ համեմատած՝ 280 հաստիքից համալրված էր 192-ը՝ 69%, այս պահին 340-ից համալրված են 259 հաստիք՝ 77%:

➢ Հաշվի առնելով, որ 2020թ-ին ԱԱՏՄ-ի առկա կարիքների և համալրվող անձնակազմի համար անհրաժեշտ վարչական սարքավորումները հնարավոր չեղավ ձեռք բերել, 2021թ-ի օգոստոսի 13-ի ԱԱՏՄ-ի Խորհրդի արտահերթ նստով ԱԱՏՄ-ի բյուջեի խնայողություններից 58.3 մլն ՀՀ դրամ ուղղվեց անհրաժեշտ համակարգչային տեխնիկա, գրասենյակային և այլ անհրաժեշտ վարչական սարքավորում ձեռք բերելու համար: Հաշվետու ժամանակահատվածում արդեն ավարտվել է համակարգչային տեխնիկայի (մոտ 90 համակարգիչ, 40 տպիչ սարքեր) ձեռքբերման գործընթացը, իրականացվում է բաշխումը, իսկ գրասենյակային գույքի, էլեկտրական սարքերի և սարքավորումների մյուս ձեռքբերումները դեռ գնման գործընթացի մեջ են:

➢ Ավարտվում են մարզային տարածքային կենտրոններին հատկացված համայնքապատկան գրասենյակի վերանորոգման աշխատանքները՝ ԱԱՏՄ-ին հատկացված պետական բյուջեի խնայողությունների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

Սույն ծրագիրը չի արտացոլում ԱԱՏՄ-ի ընթացիկ գործունեությունը: Այն կազմվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը, Ռիսկի մեթոդաբանությունը, ինչպես նաև ԱԱՏՄ-ում իրականացված վարչական վարույթների վիճակագրությունը: Որպես հաշվետու ժամանակահատված է ընդունվել 2021 թվականի հունվարի 1-ից նոյեմբերի 1-ը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ երեք բաժնից՝

1. **ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր իրավիճակ,**
2. **ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկեր,**
3. **ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ:**

Երրորդ բաժինը ներառում է հետևյալ երկու հավելվածը.

1. ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ,
2. ԱԱՏՄ-ի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ:

1.ԱԱՏՄ-ի ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

ա) ԱԱՏՄ-ի 2017, 2018 և 2019 թվականներին ստուգումներ (թեմատիկ ստուգում) չի իրականացրել՝ ստուգումների տարեկան ծրագրի, ստուգաթերթերի և նշված գործառույթը կանոնակարգող իրավական այլ ակտերի բացակայության պատճառով:

ԱԱՏՄ-ի 2021 թվականի տարեկան ստուգումների ծրագրի շրջանակներում 2021 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ **հրապարակվել է 155 հանձնարարագիր՝** ռիսկի վրա հիմնված թվով 173 թեմատիկ ստուգում իրականացնելու համար, ինչպես նաև իրականացվել է թվով **39** ռիսկի վրա հիմնված թեմատիկ վերստուգում՝ համապատասխան

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

ոլորտները կանոնակարգող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների ապահովման նպատակով:

2021 թվականի հաշվետու ժամանակահատվածում արդեն ավարտվել է 131 ստուգում, որի արդյունքում կազմվել է 67 ստուգման ԱԿՏ՝ դրանց մասով համապատասխանաբար տրվել է 67 կարգադրագիր խախտումների և թերությունների վերացման մասին և 64 տեղեկանք: Իրականցված ստուգումների արդյունքում ընդունվել է 452 որոշում վարչական տույժ նշանակելու մասին որոշում , սահմանվել է 143,658,400(հարյուր քառասուներեք միլիոն վեց հարյուր հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի տուգանք: Այդ թվում.

- **բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ոլորտում՝ 37** ստուգում, 10 վերստուգում,
- **դեղերի շրջանառության ոլորտում՝ 70** ստուգում, 12 վերստուգում,
- **բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝ 41** ստուգում, 11 վերստուգում,
- **աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում ՝ 25** ստուգում, 6 վերստուգում:

2020 թվականի համեմատ 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ռիսկի վրա հիմնված թեմատիկ ստուգումների թվերի պատկերը ըստ վերահսկողության ոլորտների հետևյալն է.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am



Այսպիսով 2021թ-ի համար նախատեսված տարեկան ստուգումների ծրագրով նախատեսված 241 ստուգումից հաշվետու ժամակահատվածում իրականացվել է 155-ը՝ 65%-ը: Սակայն, հաշվի առնելով այն, որ 2021թ-ի համար հրապարակված տարեկան ստուգումների ծրագրում ներառված էին տնտեսավարողներ, որոնց մոտ ստուգում իրականացվել էր կամ նախորդ տարի, կամ ընթացիկ տարում, հետևաբար, ընթացիկ տարում դեռ մեկ տարին չլրացած իրավունք չկար նորից ստուգում իրականացնել, ապա հրապարակված ստուգումների ծրագրից, հաշվետու ժամանկահատվածում հնարավոր ստուգվող տնտեսավարողների քանակը կազմում է 175 (2020-21 թթ-ի ընթացքում ստուգված 66 տնտեսավարողների տարբերություն): Իսկ եթե նվազեցնենք նաև այն տնտեսավարողների քանակը, որոնց մոտ ստուգում իրականացնելու համար բացակայում են սահմանված ոլորտային ստուգաթերթերը (հաշվետու ժամանակահատվածի սկզբի

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

դրությամբ 20 տնտեսավարողներ), ապա տարեկան ստուգումների ծրագրով նախատեսված և հաշվետու ժամանակահատվածում հնարավոր ստուգվող տնտեսավարողների քանակը կկազմի 155 հատ:

Հետևաբար, հաշվետու ժամանակահատվածում հրապարակված 155 հանձնարարագրերով իրականացված ստուգումների քանակը կազմում է ընթացիկ տարվա հրապարակված ստուգումների ծրագրով հնարավոր ստուգվող տնտեսավարողների 100%-ը:

բ) ԱԱՏՄ-ի գործունեության ընթացքում չպլանավորված վերահսկողությունն իրականացվել է նաև դիմում-բողոքների հիման վրա, ինչպես նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ (ներառյալ ՀՀ վարչապետի հանձնարարականները) հարուցված վարչական վարույթների միջոցով:

- ✓ **2017** թվականին ԱԱՏՄ-ը դեռևս գտնվել է ձևավորման փուլում, և վարչական վարույթներ չեն իրականացվել:
- ✓ **2018** թվականին իրականացվել է **208** վարչական վարույթ:
- ✓ **2019** թվականին՝ **1674** վարչական վարույթ (որոնց մեծամասնությունը եղել է ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ ՀՀ-ն մայրուղիների հարակից գազալցակայանների սանիանգույցների նորմերի պահաջների պահպանման հսկողություն):
- ✓ **2020** թվականին ՝ **911** վարչական վարույթ:
- ✓ **2021** թվականի հունվար-հոկտեմբերին՝ **1182** :

2021 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ԱԱՏՄ-ը ստացել է 567 դիմումներ և բողոքներ, որից 83-ը վերահասցեագրվել է, 28-ը վերադարձվել է, 130-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ: Քաղաքացիներից ստացված 333 դիմումների հիման վրա իրականացվել են վարչական վարույթներ:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107



Օրենքով սահմանված կարգով հաշվետու ժամանակահատվածում ԱԱՏՄ-ի կողմից ընդամենը հարուցվել է 1,182 վարչական վարույթ, այդ թվում ԱԱՏՄ-ի նախաձեռնությամբ՝ 849 դիմումի հիման վրա՝ 333: Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 152: Խախտումները վերացնելու համար տրվել է 408 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ 698 վարույթ կարճվել է, այդ թվում 88-ը՝ դիմումից հրաժարվելու հիմքով:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

2020 թվականի համեմատ 2021 թվականին հարուցված վարչական վարույթների թվերի պատկերը ըստ վերահսկողության ոլորտների հետևյալն է՝



Վարչական վարույթների ընթացքում տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասի մոտ հայտնաբերվել են օրենսդրության պահանջների բազմաթիվ, այդ թվում՝ անվտանգության տեսանկյունից բարձր ռիսկեր ենթադրող խախտումներ, արձանագրվել է օրենսդրության պահանջների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ոչ բավարար մակարդակ վերահսկողության բոլոր ոլորտներում:

2021 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ **աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում** հարուցված 356 վարչական վարույթից **353-ը** հարուցվել է աշխատանքային իրավունքի խախտման դեպքով:

գ) ՀՀ կորոնավիրուսի (COVID-19) հնարավոր ներթափանցման շրջանում և հետագայում երկրում արտակարգ դրության հայտարարման առաջին իսկ օրվանից

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

ԱԱՏՄ-ի ՍԲՀԿ-երում ապահովվել է ուժեղացված ռեժիմով աշխատանք՝ **24/7** գրաֆիկով հերթապահություն, իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ: Արտակարգ դրության շրջանում՝

- Ըստ ՍԲՀԿ-ների տրված տեղեկատվության, 2021 թվականին հսկողություն է իրականացվել տարբեր երկրներից ժամանած 7,438 չվերթով, 157,665 ավտոտրանսպորտային միջոցներով և 1,400 գնացքներով ժամանած 1,254,295 ուղևորների և անձնակազմի նկատմամբ, այդ թվում 32,355 0-14 տարեկան: Կատարվել է բոլոր ուղևորների, օդանավերի և գնացքների անձնակազմերի անդամների հեռահար ջերմաչափում, անհրաժեշտության դեպքում՝ կրկնակի ջերմաչափում, հարցում առողջական վիճակի վերաբերյալ, անամնեստիկ տվյալների հավաքում, տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:
- Տեղում թեստավորված 299,838 ուղևորին, գնացքի և օդանավի անձնակազմի անդամներին տրամադրվել են 354,490 ծանուցագրեր և ինքնամեկուսացման կանոնների վերաբերյալ տեղեկաթերթիկներ:
- Հայտնաբերված 59 ջերմող ուղևորները սահմանված կարգով հոսպիտալացվել են:
- Բոլոր ուղևորների մոտ ստուգվել են կորոնավիրուսի նկատմամբ թեսթերի առկայությունը: Դրանք առկա էին 607,275 ուղևորի մոտ:
- 2021 թվականի հուլիսի 1-ից պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտությունից հրաժարված անձանց թիվը կազմել է 7,744:
- Պատվաստման սերտեֆիկատներ առկա էին 164,612 ուղևորի մոտ:
- Հաշվետու ժամանակահատվածում իրակացվել է համապատասխան հսկողություն 113 մարդկային աճյուն տեղափոխման գործընթացի նկատմամբ:
- Յուրաքանչյուր հերթափոխից հետո տվյալ հերթափոխի ընթացքում ժամանած ուղևորների մասին տեղեկությունները օպերատիվ կերպով փոխանցվել են ԱԱՏՄ-ի կենտրոնական ապարատ, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները շաբաթական կտրվածքով տրամադրվել են ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին :

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

դ) Չպլանավորված վերահսկողական միջոցառումներ:

2021 թվականի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է (COVID-19 համավարակով պայմանավորված) **51,081** կանխարգելիչ, այդ թվում՝ **410** իրազեկման աշխատանք տնտեսավարող սուբյեկտների շրջանում և հանրության համար **5,538** անձանց խորհրդատվական աշխատանք, այդ թվում ՝ **3,485** թեժ գծով ստացված զանգերի թիվը,

- **45,133 ստուգայց**՝ ՀՀ ԱՆ 2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող» N 3.1.2-001-20 սանիտարական կանոնների և ՀՀ ԱՆ 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամանով հաստատված «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը» սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահանջների պահպանումը պարզելու նպատակով, ինչի արդյունքում կայացվել են վարչական որոշումներ և տրվել են նախազգուշացումներ:
- Ստուգայցերի ընթացքում բացահայտված խախտումների քանակը՝ 5778, նշանակված նախազգուշացումների քանակը՝ 667-ը, տուգանվել են 359 տնտեսավարող սուբյեկտներ, ընդհանուր առմամբ սահմանվել է 7,700,000 (յոթ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի տուգանք:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am



ե) **ԱԱՏՄ-ի 2021 թվականին թեժ գծով ստացված հարցումների և դիմում-բողոքների վերաբերյալ.**

ԱԱՏՄ-ի թեժ գծի 8107, ինչպես նաև քաղաքային հեռախոսահամարներով ստացվել է **3,485** զանգ, ֆեյսբուքյան պաշտոնական էջով՝ **189** հարց-բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ԱԱՏՄ-ի չորս վերահսկողական ոլորտներին՝ ըստ ներքոնշյալ գծապատկերի բաշխվածության.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am



Հաշվետու ժամանակահատվածում շարունակել են գերակշռել COVID-19 անվտանգության կանոններին, ստուգայցերին և կասեցման աշխատանքներին առնչվող զանգերը:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

Պայմանավորված ԱԱՏՄ-ի նոր լիազորություններով՝ աշխատանքային հարաբերություններին վերաբերող ահազանգերն ու դիմում-բողոքներն աճի միտում են գրանցել:

2.ԱԱՏՄ-ի ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐ

ԱԱՏՄ-ում առկա են մի շարք խնդիրներ և դրանցով պայմանավորված ռիսկեր, որոնք խոչընդոտում են բնականոն աշխատանքին և բացասաբար անդրադառնում ոլորտների վերահսկողության վրա:

2.1 ԱԱՏՄ-ի կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման անհրաժեշտություն

2020 թվականի սկզբում ԱԱՏՄ-ում նախատեսված է եղել 280 հաստիք: ԱԱՏՄ-ի կանոնադրական գործառույթների ավելացմամբ պայմանավորված ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի թիվ 808-Ա որոշմամբ ԱԱՏՄ-ի առավելագույն հաստիքային միավոր սահմանվել է առավելագույն 340 հաստիքային միավոր, որից քաղաքացիական աշխատանք կատարողների հաստիքները եղել են 76-ը (38,21%), իսկ քաղաքացիական ծառայողների հաստիքները՝ 264-ը (61,79%): Նշված հաստիքներից 2021 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ համալրվել է 259 հաստիք:

Անհրաժեշտ է համալրել թափուր հաստիքները, բացի այդ՝ գործող աշխատանքային թիմը մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացման և կատարելագործման կարիք ունի: Որոշ ստորաբաժանումներում կամ դրանց առանձին բաժիններում կադրային հագեցվածությունը և համալրման դանդաղ գործընթացը խնդիր է ԱԱՏՄ-ի համար, առավել ընդգծված է խնդիրը մարզերում, որտեղ պաշտոնի անձնագրերին համապատասխան կադրերի խիստ պակաս կա:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

ԱԱՏՄ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
ԱՌ 01/11-2019/2020/2021 ԴՐՈՒԹՅԱՄԲ

2019		2020		2021	
ԱԱՏՄ ԸՆԴԱՄԵՆԸ հաստիքներ՝ 280	Համալրված հաստիքներ՝ 192	ԱԱՏՄ ԸՆԴԱՄԵՆԸ հաստիքներ՝ 340	Համալրված հաստիքներ՝ 229	ԱԱՏՄ ԸՆԴԱՄԵՆԸ հաստիքներ՝ 340	Համալրված հաստիքներ՝ 259

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՌ 01/11
2019/2020/2021 ԴՐՈՒԹՅԱՄԲ

2019		2020		2021	
ԱԱՏՄ ԸՆԴԱՄԵՆԸ հաստիքներ՝	Համալրված հաստիքներ՝	ԱԱՏՄ ԸՆԴԱՄԵՆԸ հաստիքներ՝	Համալրված հաստիքներ՝	ԱԱՏՄ ԸՆԴԱՄԵՆԸ հաստիքներ՝	Համալրված հաստիքներ՝
23	23	91	28	92	50

Ինչպես նշված է նախաբանում, կադրերի վերապատրաստման համար ԱԱՏՄ-ի ղեկավարը համագործակցության հուշագրեր է ստորագրել ինչպես ԲՈՒՀ-երի, այնպես էլ ոլորտային գործունեություն իրականացնող հասարակական կառույցների հետ՝ ԱՄԿ (ILO), ԵՊԲՀ, ՀԱԱՀ, Արմավիրի զարգացման կենտրոն, Վորլդ Վիժն Հայաստան, Օքսիջեն և այլն, որոնց հետ արդեն մեկնարկել է ԱԱՏՄ-ի տեսուչների վերապատրաստման, փորձի փոխանակման, ինչպես նաև միջազգային դասընթացների մասնակցության գործընթացները:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

2.2 Ռիսկի նվազեցմանն ուղղված գործողություններ

ԱԱՏՄ-ի վերահսկողական միջոցառումներն ավելի պատշաճ իրականացնելու, դրանց ժամկետներին հետևելու, ինչպես նաև ճշգրիտ հաշվառում իրականացնելու համար, ԱԱՏՄ-ում բացակայում է ստուգումների, վերահսկողական միջոցառումների հաշվառման միասնական էլեկտրոնային համակարգ, որն ինտեգրված կլինի նաև ԱԱՏՄ-ի ռիսկերի մեթոդաբանությամբ հաշվարկվող ցուցանիշներին, տնտեսավարողների ռիսկերի հաշվարկման հաշվիչին: Ինչպես ՀՀ ԿԱ ՊԵԿ «Հարկատու» ներքին օգտագործման ծրագիրն է, անհրաժեշտ է ԱԱՏՄ-ում ևս ներդնել նմանատիպ էլեկտրոնային գործիք՝ ներքին հաշվառումն իրականացնելու, տեսուչների կողմից իրականացվելիք գործողությունների ժամկետները վերահսկելու համար:

Այդ նպատակով ևս ԱԱՏՄ-ի ղեկավարի և ՏՏ գործատուների միության կողմից գլխավորած կոնսորցիումի հետ ստորագրվել է հուշագիր՝ e-hlib համակարգը նախագծելու և պատրաստելու համար:

2.3 Ստուգումների գործընթացը

ԱԱՏՄ-ի առաջնահերթ խնդիրներից է ստուգումների գործընթացի պատշաճ կազմակերպումը: Ընթացիկ տարում իրականացվող ստուգումների ընթացքում բացահայտվում են խնդիրներ կապված ԱԱՏՄ-ի ստուգումների ռիսկերի մեթոդաբանության, արդեն հաստատված ստուգաթերթերի և ներքին ընթացակարգերի հետ, որի հետ կապված ստուգումները (այդ թվում՝ նաև ռիսկի վրա հիմնված) պլանավորելու և կազմակերպելու համար, ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշման փոփոխության առաջարկներ է ներկայացվել Գրասենյակ: Պարբերաբար քննարկումներ է իրականացվում Գրասենյակի մասնագիտական

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

ստորաբաժանումների հետ, առկա ստուգաթեթերում գործնականում հանդիպած խնդիրները վերացնելու և դրանք փոփոխելու ուղղությամբ:

2.4 Ստուգումների իրականացման ժամանակ կանխատեսվող խնդիրներ

ԱԱՏՄ-ը որպես վերահսկողական գործիք է կիրառում «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգումների գործընթացը, ինչը պահանջում է հստակ կանոնակարգված մոտեցումներ:

ԱԱՏՄ-ի կողմից ստուգումների գործընթացի կանոնակարգմանը խոչընդոտող մի շարք հարցեր ենթակա են լուծման, մասնավորապես.

2.4.1. վերահսկողության շրջանակներում կիրառվող ստուգաթերթերի վերաբերյալ տնտեսավարողների իրազեկման խնդիրներ,

2.4.2 տեսուչների կողմից վարչարարության համար պահանջվող նյութատեխնիկական հագեցվածության ապահովման խնդիրներ,

2.4.3. ԱԱՏՄ-ի կողմից (ըստ տնտեսավարող սուբյեկտների և ըստ ոլորտների) համապատասխան բազաների էլեկտրոնային վարման, տեղեկատվության հավաքագրման, ռիսկի հաշվարկման և ստուգումների իրականացման էլեկտրոնային ծրագրի ապահովում:

2.5 ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրներ

Արդյունավետ վերահսկողության որոշակի խոչընդոտ են ՀՀ օրենսդրության մի շարք բացեր, ուստի տարընթերցումներից խուսափելու և իրարամերժ արդյունքները բացառելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նշված ոլորտները կանոնակարգող և ՀՀ-ում գործող որոշ իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

➢ ՀՀ-ում թեմատիկ ստուգման լիարժեք իրականացման նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ.

➢ Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից պիտանելիության ժամկետն անցած դեղերի կիրառումը կանխելուն միտված վերահսկողության իրականացման նպատակով անհրաժեշտ է «Դեղերի մասին» ՀՀ օրենքում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն.

➢ Պետության կողմից անվճար հիմունքներով տրամադրվող դեղերի իրացման («ենթակա չէ իրացման» գրառմամբ դեղերի իրացումը դեղատնային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից կանխում) նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ է «Դեղերի մասին» ՀՀ օրենքում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն.

➢ ՀՀ դեղերի մեծածախ իրացման համար լիցենզիա ստացած կազմակերպությունների համար պարտադիր պահանջ սահմանելու և այլ կարգավորումների համար անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն.

➢ Օրենսդրության կատարելագործման և օրենսդրական բացերի բացառման նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողների պարտադիր բժշկական զննությունների իրականացման կարգը սահմանելու մասին» որոշման և ՀՀ «Աշխատանքային օրենսգրքում» կատարել համապատասխան փոփոխություններ.

➢ Վարչական իրավախախտման գործի քննության արդյունքում կայացվող որոշման անհապաղ հայտարարման և դրա փաստացի ստորագրման ամսաթվերի

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

անհամապատասխանության պատճառով առկա իրավական վեճի բացառման և որոշումները, որպես կանոն առձեռն ծանուցելու պահաջի վերացման նպատակով անհրաժեշտ է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն.

➢ Վերստուգման առանձնահատկություններից ելնելով դրա առանձին ընթացակարգի սահմանման նպատակով անհրաժեշտ է «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն.

➢ «Դեղերի մասին» ՀՀ օրենքից բխող հետ կանչ իրականացնելու գործընթացը ավելի արդյունավետ իրականցնելու, ինչպես նաև դրանով պայմանավորված ՀՀ-ում իրացվող անորակ դեղերի շրջանառությամբ պայմանավորված մարդկանց առողջության վրա բացասական ռիսկը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 164-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ.

➢ Աշխատանքային հարաբերություններում Տեսչական մարմնի դերն ու նշանակությունը, ինչպես նաև ԱԱՏՄ-ի աշխատանքային վեճերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը հստակեցնելու, ԱԱՏՄ-ին օրենքով վերապահված գործառույթները օրենսգրքով սահմանված դատական ատյաններին վերապահված գործառույթներից տարանջատելու, և հետագայում տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ.

➢ ԱԱՏՄ-ի կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների շրջանակներում կիրառվող ընթացակարգերի հետ կապված որոշակի դրույթներով պայմանավորված, մասնավորապես առանց ստորագրման ներկայացված դիմումները հետ վերադարձնելու, հարուցված վարչական վարույթների շրջանակներում իրականացվող զննումների մասին վարչական վարույթի կողմերին նախատեսվող միջոցառումների մասին

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

ԱԱՏՄ-ի վերահսկողության որոշ ոլորտներում նախապես տեղեկացնելու պահանջը բացառելու, ինչպես նաև, գործնականում անհրաժեշտությամբ պայմանավորված, հարուցված վարչական վարույթների կարճման նոր հիմքեր ամրագրելու նպատակով անհրաժեշտ է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Վերոհիշյալ փոփոխություններն իրականացնելու համար կազմվել են միջոցառումներ՝ կից սույն ծրագրին, որոնք նախատեսվում է իրականացնել հաջորդ տարում:

3.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

